


ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

ԶԵԿՈՒՅՑ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՄԱՍԻՆ 2019Թ.

ՀԱՅԱՍՏԱՆ (ԽՈՒՄԲ II, ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՑՈՒՑԱԿ)

25 հունիսի, 2020թ.

Հայաստանի կառավարությունն ամբողջությամբ չի բավարարում թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշներին, սակայն նշանակալի աշխատանքներ է իրականացնում այդ ուղղությամբ: Կառավարությունը կատարել է փոփոխություններ օրենսդրության ու կանոնակարգումների դաշտում՝ հզորացնելու Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը և ապահովել է ուսուցումներ իրավապահների համար: Իրավասու մարմիններն ավելի շատ քննություններ ու քրեական հետապնդումներ են իրականացրել, իսկ Ձոհերի նույնացման հանձնաժողովը շարունակել է լավ աշխատանքը և մասնակիցների գնահատմամբ եղել է լավ համագործակցություն կառավարության և քաղաքացիական հասարակության միջև: Այնուհանդերձ, նախորդ հաշվետու ժամանակահատվածի համեմատ կառավարությունը չի ապահովել ավելի մեծ ջանքեր: Արդեն երկու տարի է, որ կառավարության կողմից չի եղել որևէ դատապարտում, իսկ հարկադիր աշխատանքի համար վերջին անգամ դատապարտում եղել է 2014թ.: Կառավարության կողմից նույնացվել է 8 զոհ, ինչը 2012թ. հետո ամենացածր ցուցանիշն է, իսկ արձագանքման առաջին օղակում գտնվողները շարունակում են ապավինել զոհերի ինքնանույնացմանը, քանի որ չկան զոհերի նույնացման նախաձեռնողական միջոցներ, օրինակ՝ խոցելի խմբերի դիտագնման/սրբինինգի ստանդարտ ցուցիչներ: Թրաֆիքինգի զոհերի, ինչպես նաև այլ հանցանքների զոհերի համար արդարադատության հասանելիությունը եղել է ցածր, մասնավորապես՝ բացակայել են զոհակենտրոն ընթացակարգերը և վկա հանդիսացող զոհերի պաշտոնական պաշտպանության միջոցները: Ուստի, Հայաստանը գնահատման սանդղակում նահանջել է՝ տեղ գտնելով 2-րդ խմբի վերահսկման ցուցակի երկրների շարքում:



ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- 132 և 132-2 հոդվածների համաձայն իրականացնել խիստ քննություններ, քրեական հետապնդում թրաֆիքինգ իրականացնողների նկատմամբ և դատապարտել նրանց.
- Ավելացնել գոհերի նույնացման նախաձեռնողական ջանքերը, մասնավորապես՝ մշակել ստանդարտ ընթացակարգեր թրաֆիքինգի գոհերի դիտագնումների/սքրինինգի վերաբերյալ և իրականացնել համապատասխան աշխատակիցների ուսուցում՝ վերհանելու թրաֆիքինգը կոմերցիոն սեքս-աշխատողների, միգրանտների, փախստականների և ռիսկային այլ խմբերի շրջանում.
- Ապահովել խորացված ուսուցում թրաֆիքինգի գործերի քննության ու քրեական հետապնդման հարցերի շուրջ.
- Մշակել և իրականացնել միջոցառումներ երեխաների խնամքի պետական հաստատություններում մանկական աշխատանքի և երեխաների հնարավոր թրաֆիքինգի կանխարգելման ուղղությամբ.
- Ընդունել գործողությունների ազգային ծրագիր և մշտադիտարկել ու գնահատել թրաֆիքինգի դեմ պայքարի իրականացումը.
- Ջոհակենտրոն մոտեցման դրսևորման հարցերի շուրջ ուսուցումներ ապահովել քննիչների, դատախազների և դատավորների համար, այդ թվում անչափահաս գոհերի մասով.
- Ապահովել կանոնավոր տեսչական ստուգումներ անցկացնելու ու չհայտարարված ստուգայցերի միջոցով գոհեր բացահայտելու աշխատանքային տեսուչների իրավական լիազորությունների իրականացումը.
- Ավելացնել գոհերի վերաինտեգրման ծառայություններին ուղղվող միջոցները.
- Սահմանել արտերկրում գտնվող գոհերին Հայաստան հայրենադարձելու պաշտոնական ընթացակարգ, այդ թվում՝ ձեռնարկել միջոցներ կազմակերպական ծախսերը հոգալու համար.
- Լիցենզավորել, կանոնակարգել ու ուսուցում ապահովել տեղական զբաղվածության ծառայությունների և գործակալների համար, որպեսզի նրանք կարողանան օգնել կանխել Հայաստանի քաղաքացիների հարկադիր աշխատանքն արտերկրում:

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Իրավապահ տիրույթում Կառավարության ջանքերը պահպանվել են: Քրեական օրենսգրքի 132 և 132-2 հոդվածներով քրեականացվում է թե՛ սեռական, թե՛ աշխատանքային թրաֆիքինգը և այդ հոդվածներով նախատեսվում է 5-ից 8 տարվա ազատազրկում, ինչը բավարար խիստ և

համարժեք պատիժ է այնպիսի ծանր հանցանքների համար, ինչպիսին է օրինակ բռնաբարությունը: Պատկան մարմինները հետաքննել են թրաֆիքինգի 11 գործ (2018թ. քննվել էր 9 գործ): Այս գործերից 8-ն առնչվում էին հարկադիր աշխատանքին, 3-ը սեռական թրաֆիքինգին (2018թ. քննվել էր սեռական թրաֆիքինգի 5 գործ և 1 գործ, որը միաժամանակ պարունակում էր սեռական և աշխատանքային թրաֆիքինգի տարրեր): Պատկան մարմինների կողմից մեղադրանք է առաջադրվել 3 մեղադրյալի՝ հարկադիր աշխատանքի համար և 1 հոգու՝ սեռական թրաֆիքինգի համար (2018թ.-ին մեղադրանք է առաջադրվել 1 հոգու՝ հարկադիր աշխատանքի համար): Դատարանների կողմից 2018 և 2019 թվականներին սեռական թրաֆիքինգի հոդվածով դատապարտումներ չեն եղել, իսկ աշխատանքային թրաֆիքինգի հոդվածով վերջին դատապարտումը եղել է 2014թ.:

Հայաստանի Ոստիկանության կազմում շարունակում է գործել Թրաֆիքինգի դեմ պայքարի բաժինը, որը գործի նախնական քննությունից հետո այն ուղեգրում է Քննչական կոմիտեին՝ համակողմանի քննության նպատակով: Ոստիկանության տեղական բաժանմունքներում շարունակել են ունենալ պատասխանատու ոստիկան, որը տվյալ տարածքում զբաղվել է թրաֆիքինգի հարցերով: Քաղաքացիական հասարակությունից հայտնում էին, որ հաջող համագործակցել են Թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնի և Քննչական կոմիտեի քննիչների հետ. այնուհանդերձ, իրավապահ մարմինները չեն իրականացրել նախաձեռնողական քննություններ և ապավինել են զոհերի ինքնանույնացմանը: Վերակազմավորման արդյունքում Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության կազմում գործող Թրաֆիքինգի դեմ պայքարի բաժինը տեղ գտավ Անձի և գույքի դեմ ուղղված հանցանքների վարչության կազմում, ինչը որոշ փորձագետների գնահատմամբ կարող էր նվազեցնել նախաձեռնողական քննություններին Թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնի կողմից ուղղվող ժամանակը, եթե բաժինը ներգրավվեր ոչ-թրաֆիքինգային գործերի քննության մեջ: Դիտորդները շարունակում էին հայտնել, որ իրավապահ մարմիններում բացակայում էր գոհակենտրոն մոտեցումը: Թեպետ Քննչական կոմիտեն իր 5 մարզային կենտրոններում ձևավորել է հարցաքննության 20 մանկական սենյակներ, սակայն տեղի քննիչները զոհերին, այդ թվում՝ երեխաներին հարցաքննելու պատշաճ հմտություններ չունեին, ինչի հետևանքով ձեռք էին բերվում անընդունելի ապացույցներ կամ գործերը կարճվում էին: Ուղեցույցների համաձայն մեծահասակների հարցաքննությունը կարող էր առավելագույնը տևել չորս ժամ, իսկ անչափահասներինը՝ երկու ժամ, սակայն դիտորդները հայտնում էին, որ նախկինում բազմիցս ոստիկանության հարցաքննությունները շատ ավելի երկար են տևել՝ մեծացնելով վերազոհականացման ռիսկը: Բացի այդ, որոշ քննչական ընթացակարգերի ժամանակ դեռևս ապահովված չեն սեռազգայուն մոտեցումներ, օրինակ՝ կին զոհերի դեպքում միջամտողական բուժզննումների անցկացումը կին բուժաշխատողների կողմից: Քննչական կոմիտեն և Գլխավոր դատախազությունը տեղամասային ոստիկանների կողմից թրաֆիքինգի հատկանիշներով հարուցված գործերը հաճախ կարճում էին կամ փոխում հոդվածը՝ ոստիկանության կողմից սկզբնապես սխալ հոդվածի կիրառման կամ ապացույցների բացակայության հիմքով: 2019թ. փոխվել է սեռական թրաֆիքինգի հատկանիշներով

հարուցված մեկ գործի հողվածը, կարճվել է աշխատանքային թրաֆիքինգի չորս գործ՝ ապացույցների բացակայության հիմքով և կասեցվել է մեկ գործ՝ թրաֆիքինգ իրականացնողներին չբացահայտելու հիմքով (2018թ. կարճվել է 2 և փոխվել է 1 գործի հողվածը):

Կառավարությունը թրաֆիքինգի հարցերով ուսուցումներ է ապահովել 146 ոստիկանի, 54 դատավորի, 86 քննիչի, 96 դատախազի և քրեակատարողական հաստատությունների 540 աշխատակցի համար: Կառավարության կողմից թրաֆիքինգին առնչվող հանցանքներում պետական պաշտոնյաների հանցակցության մասին քննությունների, հետապնդումների ու դատապարտումների մասին հաղորդումներ չեն եղել: 2019թ. չի իրականացրել միջազգային քննություններ կամ արտահանձնումներ: Ռուսաստանի հետ կապված հարկադիր աշխատանքի գործերի քննությունը շարունակում էր մնալ սահմանափակ, քանի որ հայ քննիչները շարունակում էին իրավապահների հետ համագործակցության հարցում դժվարությունների բխվել: Նույն կերպ, Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը շարունակում էր խոչընդոտել իրավապահ ու զոհերին աջակցելու աշխատանքներին Թուրքիային առնչվող գործերի մասով:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Թրաֆիքինգի նույնացված զոհերի պաշտպանությանն ուղղված Կառավարության ջանքերը թույլ էին մնում: Նույնացվել է 8 զոհ (2018թ.՝ 9 զոհ), որից 5-ը ենթարկվել են հարկադիր աշխատանքի, 3-ը՝ սեռական թրաֆիքինգի (2018թ.՝ 8 սեռական թրաֆիքինգի և 1 միաժամանակ սեռական թրաֆիքինգի և հարկադիր աշխատանքի զոհ). և՛ 2018, և՛ 2019թթ. կային 2 անչափահաս զոհ. զոհերից 4-ը տղամարդ էին, 4-ը կին (2018թ.՝ 8 տղամարդ և 1 կին). զոհերից 2-ը Տաջիկստանից էին, 1-ը՝ Իրանից (2018թ. կար 4 օտարերկրացի զոհ Հնդկաստանից): Նույնացման, աջակցության և ուղղորդման ընթացակարգերը համապատասխան դերակատարների համար սահմանված են Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման ու աջակցության մասին 2014թ. օրենքով: Այնուհանդերձ, փորձագետները շարունակում էին մատնանշել, որ չկար նախաձեռնողական մոտեցում նույնացման հարցերում և կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում զոհերի ինքնանույնացումից հետո: Կառավարությունը չէր ապահովում ստանդարտ ցուցիչներ, իսկ առաջին օղակի աշխատողները չէին իրականացնում խոցելի խմբերի դիտագնում/սքրինինգ թրաֆիքինգի ցուցիչների մասով, այդ թվում՝ կոմերցիոն սեռական գործունեության մեջ ներգրավվածների և օտարերկրացի միգրանտ աշխատողների շրջանում: «Նախնական նույնացման փուլում», որը հնարավոր զոհի մասին տվյալների հավաքման փուլն է և առավելագույնը կարող է տևել 10-ն օր, հնարավոր զոհերի համար Կառավարությունն ապահովում էր ժամանակավոր կացարան, անհետաձգելի բուժօգնություն և հոգեբանական աջակցություն: Չոհերի նույնացման հանձնաժողովը, որի կազմում կան ներկայացուցիչներ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, Գլխավոր դատախազությունից, Ոստիկանությունից և հասարակական կազմակերպություններից (ՀԿ), պաշտոնապես

մարդկանց թրաֆիքինգի գոհ է ճանաչել հիմնվելով այն տեղեկությունների վրա, որոնք ձեռք են բերվել «նախնական նույնացման փուլում»: Քաղաքացիական հասարակությունը շարունակում էր մատնանշել, որ ուղղորդման մեխանիզմները լավ են գործել և եղել է դրական համագործակցություն կառավարության հետ:

Կառավարությունը գոհերի պաշտպանության համար և՛ 2019, և՛ 2018թթ. հատկացրել է 19 միլիոն ՀՀ դրամ կամ 40.000 ԱՄՆ դոլար, որը ներառում է ՀԿ-ի կողմից գործարկվող կացարանի գործառնական ծախսերը: Կառավարությունը և տեղական ՀԿ-ները համատեղ գոհերին ապահովել են իրավական, հոգեբանական աջակցություն և բուժօգնություն, կացարան, միանվագ դրամական փոխհատուցում 250.000 ՀՀ դրամի կամ 530 ԱՄՆ դոլարի չափով և ներգրավել են նրանց տարբեր սոցիալական, կրթական և զբաղվածության ծրագրերում: Կառավարությունն առաջարկել է անվճար բուժօգնություն. սակայն իրավական խորհրդատվության հարցում, այդ թվում՝ փաստաբանների ծախսերը հոգալու մասով, հիմնվել է ՀԿ-ների աշխատանքի վրա: Բուժօգնություն ապահովվել է 3 գոհի համար (2018թ.՝ 3), 6 գոհ ստացել է միանվագ դրամական փոխհատուցում (2018թ.՝ 6): Կառավարությունն օրենքում փոփոխություններ կատարեց, որը անչափահաս գոհերի խնամակալներին թույլ էր տալիս ստանալ միանվագ դրամական փոխհատուցումը: Կառավարությունը գոհերին աջակցելու նպատակով պահպանել է համագործակցության համաձայնագիրը և մասնակի ֆինանսավորել է ՀԿ-ի կողմից գործարկվող մեկ մասնագիտացված կացարանի. ՀԿ-ի կողմից գործարկվող կացարանում աջակցություն են ստացել տարվա ընթացքում նույնացված 4 նոր գոհեր (2018թ.՝ 3 գոհ): ՀԿ-ի կողմից գործարկվող կացարանում տեղավորված չափահաս գոհերից պահանջվել է առանց ուղեկցության դուրս գալու դեպքում կացարանի անձնակազմին տեղյակ պահել այդ մասին, սակայն նրանք ազատ էին իրենց հայեցողությամբ հեռանալ կացարանից, եթե աջակցության կարիք այլևս չէին զգում: Պատկան մարմինները օտարերկրացի գոհերի համար ապահովել են նույն ծառայություններն ու աջակցությունը, ինչ Հայաստանի քաղաքացի գոհերի համար: Տղամարդ գոհերը կարող էին մնալ կացարանում և ՀԿ-ի վարձած բնակարաններում. տղամարդ գոհերի համար տարվա ընթացքում կացարանի կարիք չի եղել (4 հոգի 2018թ.): Կառավարությունն ապահովել է արհեստագործական ուսուցումներ գոհերի համար, սակայն վերաինտեգրմանն ուղղված աշխատանքների և երկարաժամկետ աջակցության աշխատանքների գերակշիռ մասը դեռևս հոգում է քաղաքացիական հասարակությունը՝ առանց պետական ֆինանսավորման: Բացի այդ, Կառավարության կողմից թրաֆիքինգի գոհերը չեն ներառվել այն խոցելի խմբերի շարքում, որոնք իրավասու են օգտվել բնակապահովման պետական ծրագրերից: ՀԿ-ի կողմից գործարկվող կացարանում և մանկական խնամքի հաստատություններում ընդունել են անչափահաս գոհերին, սակայն փորձագետների հաղորդմամբ երեխաների համար կացարանի և խնամատար ընտանիքների պակաս էր զգացվում, ինչի հետևանքով պատկան մարմինները հաճախ երեխաներին հանձնել են ընտանիքի անդամներին, որոնք ներգրավված էին նրանց շահագործման մեջ: Եվրոպայի խորհրդի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագիտական խմբի (GRETA) և ԵԱՀԿ-ի 2017թ. զեկույցներում մատնացույց էին արվում մանկական աշխատանքի ու երեխաների նկատմամբ բռնությունների դրսևորումներ երեխաների խնամքի պետական հաստատություններում: Կառավարությունը չի ապահովել

ուսուցում սոցիալական աշխատողների համար, մինչդեռ 2018թ. թրաֆիքինգի հարցերի շուրջ ուսուցում ապահովել էր 64 սոցիալական աշխատողի համար: Օրենքի համաձայն ՀՀ արտաքին գործերի նախարարությունը լիազորված է համակարգել արտերկրում գտնվող ՀՀ քաղաքացի զոհերի հայրենադարձումը, սակայն չկային սահմանված ընթացակարգեր կամ կազմակերպական ծախսերը հոգալու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ. 2019թ. կամ 2018թ. որևէ զոհ չի պահանջել հայրենադարձում: Օրենքի համաձայն օտարերկրացի զոհերն ունեն 30-օրյա մտորման ժամկետի իրավունք, որի ընթացքում զոհերը կարող են վերականգնվել մինչ իրավապահների հետ համագործակցելու կամ չհամագործակցելու մասին որոշում ընդունելը: Օրենքն օտարերկրացի զոհերին նաև իրավունք է տալիս ստանալ մշտական կացության թույլտվություն, սակայն դիմելիս անհրաժեշտ է հաստատում աշխատանքի առկայության մասին. մեկ զոհի տրվել է կացության թույլտվություն:

Նախորդ տարիներին դիտորդների հաղորդմամբ եղել են վարչական տուգանքի կիրառման առանձին դիպվածներ սեռական թրաֆիքինգի զոհերի հանդեպ՝ պայմանավորված ոչ համարժեք նույնացմամբ: Ըստ հասարակական սեկտորի փորձագետների որոշ հեռավոր բնակավայրերում իրավապահ աշխատակիցները կարող էին չտիրապետել ինֆորմացիային ու չունենալ անհրաժեշտ պատրաստվածությունը, որպեսզի զոհերին իրազեկեն պաշտպանություն ու աջակցություն ստանալու նրանց իրավունքի մասին: Զոհերը վարանում էին աջակցել քրեական հետապնդումներին, քանզի ցուցմունք տվող անձի գաղտնիությունը չէր ապահովվում, ինչը թրաֆիքինգ իրականացնողների կողմից հաշվեհարդարի վտանգ էր ստեղծում, ու նաև արատավորում էր նրանց բարի համբավը ընտանիքի ու շրջապատի աչքերում: Իրավասու մարմինները լիարժեք չեն պաշտպանել զոհերի, այդ թվում՝ անչափահասների իրավունքները վարույթների ընթացքում. դատարանում զոհերը, այդ թվում՝ երեխաները միշտ կանգնել են թրաֆիքինգ իրականացնողների առաջ, ինչը կարող է ստիպել վերստին վերապրել ողջ տրավման: Կառավարությունը շարունակում էր չունենալ վկա հանդիսացող զոհերի պաշտպանության պաշտոնական ծրագիր: Քրեական դատավարության օրենսգրքով և 2016թ. ընդունված Կառավարության որոշմամբ նախատեսվում է որոշ պաշտպանություն վկա հանդիսացող տուժողների համար, սակայն այս մեխանիզմներից ոչ մեկը 2019 և 2018թթ. չի գործածվել: Օրենքը զոհերին իրավունք է վերապահում հատուցում պահանջել քրեական գործի շրջանակում կամ առանձին քաղաքացիական հայցի միջոցով: Նախորդ տարիներին դատավորները քաղաքացիական հայցերով փոխհատուցման վճիռներ չեն կայացրել՝ նշելով, որ զոհերը չեն կարողացել հիմնավորել ֆինանսական կորուստներ կրած լինելու հանգամանքը: Օրենքը քննիչներին թույլ էր տալիս արգելանքի տակ վերցնել մեղադրյալի գույքը՝ քաղաքացիական հայցերով վճարումն ապահովելու համար, սակայն գործնականում սա շատ հազվադեպ է կիրառվել:

ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Տարվա ընթացքում նվազել են կառավարության ջանքերն ուղղված մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանը: Հաշվետու ժամանակահատվածում Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով նախարարական խորհուրդը և միջգերատեսչական աշխատանքային խումբը չեն

մշտադիտարկել կամ իրականացրել հակաթրաֆիքինգային աշխատանքներ, քանի որ կառավարության կողմից վերակազմավորվել, միաձուլվել կամ վերացվել են այն օղակները, որոնք նախկինում պատասխանատու էին համապատասխան գործողությունների մեծ մասի համար: Միջգերատեսչական աշխատանքային խմբի համակարգման մանդատը Արտաքին գործերի նախարարությունից փոխանցվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Կառավարությունը մշակել է 2019-21թթ. գործողությունների ազգային ծրագիրը, սակայն այն չի ընդունել, իսկ դիտորդները հայտնում էին, որ կառավարությունը չի կատարել 2016-18թթ. գործողությունների ազգային ծրագրի ազդեցության ու արդյունքների գնահատում: Գիտության, կրթության, մշակույթի և սպորտի հարցերով նախարարությունը ֆինանսավորել է հակաթրաֆիքինգային վերկայքի աշխատանքը և կազմակերպել է մարդկանց թրաֆիքինգի լուսաբանմամբ զբաղվող լրագրողների ամենամյա մրցանակաբաշխության արարողությունը: Զինվորականներն ու իրավապահները իրազեկման արշավներ են կազմակերպել անձնակազմի ու աշակերտների/ուսանողների համար: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մարդկանց թրաֆիքինգի մասին սոցիալական գովազդի պատրաստման նպատակով հատկացրել է 786.000 ՀՀ դրամ (1.650 ԱՄՆ դոլար): Չի եղել աշխատանքի տեղավորման գործակալությունների գործունեությունը վերահսկելու և կանոնակարգելու մեխանիզմ: Առողջապահության նախարարությունը 2017թ. ձևավորել է Առողջապահական տեսչական մարմինը, սակայն այդ մարմնի գործառույթները սահմանափակվում են աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության ապահովման խնդիրներին ուղղված տեսչական ստուգումներով, և այն իրավասություն չունի կատարել չհայտարարված կամ անսպասելի ստուգումներ: Այնուհանդերձ, 2019թ. օրենսդրական փոփոխություններ ընդունվեցին, որով Առողջապահական տեսչական մարմինը բարեփոխվում է՝ դառնալով Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին, որն օժտված է ավելի լայն իրավասություններով, այդ թվում՝ ռիսկերի գնահատման մեթոդաբանության ու տեսչական ստուգաթերթերի վրա հիմնված տեսչական ստուգումների անցկացման իրավասությամբ: Պետական կառույցները թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկություններ են զետեղել իրենց կայքերում, այդ թվում տեղեկություններ ոստիկանության և ՀԿ-ների կողմից գործարկվող թեժ գծերի վերաբերյալ. թեժ գծին ստացված զանգերի քանակի մասին Կառավարությունը հաշվետվություն չի ներկայացրել: Կառավարությունը ջանքեր չի գործադրել կոմերցիոն սեռական ակտերի նկատմամբ պահանջարկը նվազեցնելու ուղղությամբ:

ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՐԿՐՈՒՄ

Ինչպես վերջին 5 տարիների տվյալներն են փաստում, Հայաստանում տեղի է ունենում տեղացի և օտարերկրացի զոհերի շահագործում, ինչպես նաև Հայաստանի քաղաքացիների շահագործում արտերկրում: Ռուսաստանում, Միացյալ Արաբական Էմիրություններում և Թուրքիայում աշխատանք փնտրող որոշ հայ միգրանտներ բախվում են հարկադիր

աշխատանքի խնդրին, որը սովորաբար հետևում է աշխատանքի տեղավորման հետ կապված խաբեություններին և աշխատանքի տեղավորման միջնորդների կողմից միջնորդավճարների չափից մեծ պահանջների ներկայացմանը. ՀՀ քաղաքացի կանայք և երեխաները կարող են նաև սեռական թրաֆիքինգի ենթարկվել Միացյալ Արաբական Էմիրություններում և Թուրքիայում: ՀՀ քաղաքացի կանայք և երեխաները երկրի ներսում կարող են ենթարկվել սեռական ու աշխատանքային թրաֆիքինգի, նրանց նաև կարող են դրդել հարկադիր մուրացկանության: Որոշ երեխաներ երկրի ներսում աշխատում են գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների մատուցման ոլորտներում, որտեղ նրանք խոցելի են աշխատանքային թրաֆիքինգի մասով: Գիշերային ակումբներում որպես պարուհիներ աշխատում են ռուսներ, ուկրաինացիներ և բելառուսներ, որոնք խոցելի են սեռական թրաֆիքինգի մասով: Թրաֆիքինգ իրականացնողները կարող են թիրախավորել հետզհետե ավելացող հնդիկ միգրանտներին, որոնք պատրաստակամորեն աշխատանք են փնտրում սովետային ոլորտում և բախվում են հարկադիր աշխատանքի խնդրին: Մարդկանց թրաֆիքինգի առումով խիստ խոցելի են մնում գյուղական բնակավայրերի կրթական ցածր մակարդակ ունեցող տղամարդիկ և սոցիալական խնամքի հաստատությունների երեխաները: